



Ս Փ Յ Ո Ւ Ռ Ո Ւ Ի Մ

ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՆԵՐ

Երկուշաբթի, 10 օգոստոս, ժամը 13.30-ին, Մոսկվային օդանավով թուրքից ժամանեց Մումանահայ թեմի առաջնորդ գերազնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս, վերադառնալով էջմիածնեն: Հաջորդ օր երեքշաբթի երեկոյան, Վազգեն սրբազն ընդարձակ զեկուց մը ներկայացուց եկեղեցական ազգային իշխանություններու և կազմակերպությանց ներկայացուցիչներու առաջ, իր Սովետական Հայաստան և էջմիածնի կատարած ճանապարհորդության և աշխատանքներու կապակցությամբ:

«Ամեփան Շահումյան» Մշակույթի տան հրավերով Տ. Վազգեն սրբազն, հինգշաբթի 14 օգոստոսի երեկոյան, խուն բազմության մը ներկայության, ավելի քան ժամ մը տեսող դասախոսության ընթացքին վաս գույներով և ոգևորությամբ պատմեց մեր Մայր Հայունիքին՝ Սովետական Հայաստանի այսօրվան ծաղկալ վիճակի և նորանոր հաջողություններու մասին, կյանքի բոլոր մարդերուն մեջ:

Դասախոսության բացումը կատարեց Հայ մշակույթի տան նախագահ դեկտ. Գր. Բամպովնան, ուրախությամբ ողջունելով Ռումանահայ թեմի առաջնորդի վերադարձը Մայր Հայունիքին, որ, բոլոր Սփյուռքի հայության կյանքի և ներշնչման աղբյուրն է եղած ու պիտի մնա միշտ:

Խոսք առնելով Տ. Վազգեն սրբազն, ըսավ.

«Միրտու լեցուն հայրենական անուշ հույզերով ձեզ կրերեմ բոլորիդ խանդավառ ողջուներ մեր Սովետական Մայր Հայունիքին և օրհնությունը հայրապետական Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսի:

Վերստին երջանկությունը ունեցա այցելելու մեր Մայր Հայունիքը ու Մայր Աթոռ Ս. Էջմիածնինը և տեսնելու մեր վերածնած ու ծաղկյալ Հայունիքի պայծառ դեմքը: Էջմիածնին, մասնակցեցա աշխատանքներու և խորհրդակցություններու, մեր եկեղեցվո հետ կապված խնդիրներու առնչաթյամբ: Հինգ անգամ սովոր պատարագ մատուցանեցի Մայր Տաճարի և Երևանի եկեղեցիներու մեջ:

Մեծ ուրախություն է ինձ համար ավետել ձեզ թի՝ մեր ալեզարդ Վեհափառ Հայրապետը, իր 85 տարիներու բնուան տակ, քաջառողջ է և առուցք, կորովի ու լավատես, աննկում իր հավատքին մեջ դեպի Հայաստանյաց եկեղեցվո ու հայ ժողովրդի ոսկի ապագան:

Աղոթող է մանավանդ ի սիյուռա աշխարհի տարրող մեր ժողովուրդի զավակներուն պահնաման, բարօրության և խաղաղության համար:

Ամենայն Հայոց Հայրապետի ծրագրին ու իդմն է, որ Մերձավոր Արմելք ուղևորվելով մեր հավատայալ ժողովուրդին տանիմ հայրապետական օրհնություններու հիտ միասնեղ՝ սիրո և խաղաղության խոսքը Հայաստանյաց եկեղեցվո միասնականության, առաջնորդված վերածնած Մայր Հայունիքի լույս գաղափարներով:

Մայիս 15-ին, օդանավով Մոսկվա ժամանելով, երեք օր հետո իմ ճանապարհս դեպի Երևան շարունակեցի շոգեկառով, որ օժակված է ամեն հարմարություններով, շորս օրերու ճամբան, ըստ կարելվույն հանդատավետ դարձնելու համար:

Եվ իրոք այդ շորս օրերը անցան հանգիստ ու հաճելի: Իմ վագոնին մեջ որպես ուղեկից ունեցա մեր երկորի լավագույն գի-

տական աշխատողներեն՝ պրոֆ.—դոկտ. Արաքսի Բաբայան (քիմիկոս), պրոֆ. Գեորգյան՝ Լենինականի Մանկավարժական ինստիտուտի տնօրենը, շինարարության գծով աշխատող անվանի ինժեներներու խումբ մը, իրենց գլուխը ունենալով ինժեներ Լևոն Երվանյանը, և ուրիշներ:

Ավելորդ է ըսել, թե անմիջապես մեր մեջ մտերմական հարաբերություններ ստեղծվեցան հետզհետե աճող խանդավառությամբ: Սա ինձ համար անմոռանալի դրացիւթյուն մը եղավ մինչև Երևան:

Երբ շոգեկարքը կմոտենար Երևանին, մեր ձախասիյուրը սկսակ երգել ցնծագին և հաղթական՝ «Գարուն» Երևան, սիրուն Երեւան:

Ահա և Երևանը 1953-ին: Նորանոր բազմաթիվ կառուցումներ կտևնեմ, կատարված վերջին երկու տարիներու ընթացքին: Ասֆալտապատ նոր շուս մը Զանգուի ափին Մանկական երկաթգիծն դեպի Արզնի տանող, հոշակավոր ծածկված շուկա, Ֆիշարմոնիայի գահինը, զմայլելի կերպով հորինված ու լուսավորված, և այլն և այլն:

Հրաշալի է Բաղրամյան պողոտան, որ կրարձրանա դեպի Արաբկիր: Հարյուրավոր նոր շենքեր՝ գիտական, մշակութային կամ պետական հաստատություններ ու բնակելի շենքեր, բուրու գումավոր տոփով շինված մեկը մյուսեն տարրերվող գույներով ու ձևերով, մեկը մյուսեն գեղեցիկ:

Բաղրամյան պողոտային անցնելով, կիսործիս թե ճարտարապետական ցուցահանդես մըն է որ կայցելեն: Ամեն մեկ նոր շինություն ճարտարապետական ցյուտ մըն է: Ամեն մեկը՝ նոր և հաջող համադրություն մը՝ հայկական հին ճարտարապետական ոճի և սովետական նորագույն կառուցողական ըմբռնումներու:

Ի պատիվ իրենց, Սովետական Հայաստանի ճարտարապետները լավագույն կերպով կրցած են լուծել ազգային հին ոճը նորագույն գաղափարներու հետ ներդաշնակորելու խնդիրները: Խնչակը մեր հին շրջաններուն, այսօր ալ հայ ճարտարապետության մեջ գեղեցիկի գաղափարը կիրականանա՝ այլազանության (անկրկնելիության)՝ մեջ ներդաշնակության սկզբունքով:

Երևանի հոյակապ կառուցումներեն մին պիտի դառնա մատենադարան-ձեռագրատուն շենքը, որ ավարտելու վրա է: Կառուցվի բազալտ քարե և իր մուտքին զետեղված պիտի ըլլան մեր հին մեծ մատենագիրներու և գիտնականներու ինը արձանները, որոնց շարքին՝ Սահակ Պարթևը, Մեսրոպ Մաշտո-

յը, Մովսես Խորենացին, Անանիա Շիրակացին, Միսիթար Հերացին և ուրիշներ: Իմ այս տեղ եղած ատեն, մըցության մասնակցող քանդակագործները պատրաստած էին արդեն այս արձաններու մակետները, պետական հանձնաժողովին ներկայացնելու համար իրենց գործերը:

Այս անգամ առիթը ունեցա տեսնելու Սևանի սոորերկուր հիղուկայանը, որ կոտնվի Սևան լճի ափին: Լիքուով իշանք և տեսանք սովետական տեխնիկայի արդ հրաշալիքը: Ընդարձակ սրա հներու մեջ դեմքված հակա մեթեռաներ — տուրբիններ, գեներատորներ, տրանսֆորմատորներ, խողովակներ և հազարումնեկ այլքայլ մեթեռական կազմվածքներ փիշեր ու ցերեկ անդադար շարժման մեջ են և առասպելքական վիշապի նման գիտնին տակեն կիսմեն Սևան լիճի ջուրերը:

Այդ ջուրի զանգվածը շարժման մեջ դնելի հետո առողջիններն ու գեներատորները, որով ծնունդ կառնի էլեկտրական հասանքը, իր փոթորկահույզ ճամբան կշարունակե լեռնան տակեն, և դուրս գալով լույս աշխարհ իր վազքը կշարունակե Զանգու գետի հունվով:

Սևանդէսի այս հսկայական և բարդ մեքենաները կաշխատին ավտոմատ կերպով, առանց մարդկային ձեռքի միջամտության: Ամբողջ հիղուկայանին մեջ միայն 2—3 մարդկէ տեսանք, մեքենաներու կերպունական սրահին մեջ, որոնք հարյուրավոր տեսակ ժամացույցներու առջև կանգնած կհետևին սլաքներու ցուցմունքներուն, արձանագրելու համար ջուրին քանակը, հոսանքին ուժը և այլն:

Սևանին մինչև Երևան, Զանգուի ափին, կառուցված են արդեն 4 հիղուկայաններ: Պիտի կառուցվին ևս 4 նման հիղուկայաններ, մեր երկրին պիտի տան առատ լույս, շերմություն և շարժիչ ուժ, ու միաժամանակ պիտի ոռոգվին հարյուր հազարավոր հեկտար հողեր:

Այցելեցինք նաև Գյուղուշգէսը: Այսուղի, Զանգուի ջուրերը բերված են լեռան մը կատարը, և 4 հսկայական խողովակներով կիշեցվին հիղուկայան:

Ջուրի այս հսկա զանգվածը, բարձրութենեն վար նետվելով, հոսանքի ուժով մը շարժման մեջ կրնե կայանին տուրբիններու ծնունդ տալով էլեկտրական էներգիայի: Ապա ջուրը էլեկտրակայանեն դուրս գալով Զանգուի բնական հոմանին մեջ կմտնե և իր փոթորալի վազքը կշարունակե դեպի Երևան:

Սրբազն հայրը ապա մանրամասնորեն պատմեց մեր հայրենաղարձ հայրենակիցներու բարգավաճ ու երջանիկ կյանքի մասին, ընդգծելով հատկապես փայլուն հաջողությունները երիտասարդ սերոնդին և ուսանողության։ Այս խոստամասնից երիտասարդ մտավորականության մեջ, իրենց ձեռք բերած գիտական կոչումներով և աշխատանքի արդյունքներով, առաջին շարքին վրա կտունվի Գեղրդ Տիրացյանը և Սուրեն Քոլյանցյանը պատմագիտության մեջ, Տիգրան և Մասիս Մանուկյան եղբայրները, Կայծակ Աթանասյանը, Հակոբ Առաքելյանը որպես ուսուցիչներ ֆրանսերեն և սպաներեն լեզվի, Անահիտ Աթանասյան, Թորոսմանյան, Գալայրցյան թ. և Գարիպյան գեղարվեստի գծով Վահե Դանիելյան, Հակոբ Պարտիկանյան, Սամսոն Պողոսյան որպես ինժեներներ, Հարություն Հակոբյան, Արամ Հովհակիմյան՝ սպորտի շեմպիոնական տիտղոսներով և շատ ուրիշներ։

Սրբազն հայրը իր խոսքերը վերջացուց, ըստով. «Հայրենադարձ երիտասարդի մը փայլուն հաջողությունը առանձնապես հուզում և ուրախություն պատճառեց ինձ։ Մոսկվայի հոչակավոր «Կոլոննի սալի» մեջ, անվանի ուս արվեստագետներու շարքին,

երգեց նաև Բեյորութեն հայրենադարձ, Մոսկվայի կոնսերվատորիայի Յ-րդ կորսի ուսանող՝ Լևոն Կեօղլանյանը։ Համերգին ծանուցողը երկու խոսքով ներկայացնուց ներկագույնով ուս մտավորական ունկնդիրներուն տաղանդավոր հայ երգիչը, շեշտելով թի Լևոնը Թյուրքիո մեջ հարածված ժողովուրդի մը զավակ, ապաստան գտնելով իրանանի մեջ, հագիկ կարողացած է իր ապրուստը ճարել բանվորությամբ, բայց 1947-ին Մայր Հայրենիք գալով գտած է լավագույն պայմաններ՝ ուսանելու և իր բնատուր տաղանդը արժեքավորելու։ Եկ իրոք երիտասարդ հայ երգիչը իր երգերով հմայեց բոլորին և արժանացավ խելահեղ ծափահարություններու։

Լևոն Կեօղլանյանի կյանքի պատմությունը և իր այսօրվան փառքը կխորհրդանշեն հայ ժողովուրդի վերածնունդը և բարգավաճ ու հառաջադեմ կյանքի ընթացքը՝ շնորհիվ ուս մարդասեր և մեծահոգի ժողովուրդի եղբայրական անվերապահ աջակցության և Սովետական իշխանության ստեղծած օգտաշատ պայմաններու։

(Բոլիխարեստ, «ԸՈՐ ԿՅԱՆՔ», 23 և 30 օգոստոսի 1953 թ.)

ՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ ԽՄԲԱՑԵԼԻ ՄԵՋ

Երուսաղեմի միաբաններեն թարգեն վարդապետ Ապատյան, որ Պատրիարքարանի ներկայացուցիչն է հսրայելի մեջ, հետեւյալ տեղեկությունները հաշողորդե այդ գաղութի մասին («Հայ Եկեղեցինի մեջ»)։

Խսրայելի մեջ 950 հայեր կապրին, 500 Հայֆայի և շրջականներուն, 400 Յաֆայի և շրջականներուն և մաս մըն ալ հրեական երուաղեմի մեջ։ Նախապես Պաղեստինի հայերը բարգավաճ գաղութ մըն էին (մոտավորապես 5.000 հոգի), մեծ մասը այժմ Հին Երուաղեմի և Հորդանանի կցված Պաղեստինի մեջ կրնակին։

Պատրիարքարանի հաստատությունները ամփոփված են Սիոն լեռան վրա, քաղաքի պարիսպներեն ներս, հոն, ուր ատեն մը կանգնած էր Հերովդեսի պալատը։ Այստեղ է վանքը, Ս. Հակոբյանց հրաշալի Մայր Տաճարը իր պատմական գանձերով, Ժառանգավորաց վարժարանը, դպրոցները, 500 ուխտավորներու բավկելու շափ դարբասները։ Պատրիարքարանը ունի նաև բազմաթերթյան տպարան մը, ուր իր պաշտոնաթերթը «Սիոն» կհրատարակի, և ճոխ մատենադարան մը, որ երրայական համալսարանի և Ազգային

մատենադարաններեն ետք երկրորդ տեղը կգրավի։ Մատենադարանը կպարունակի 4.000 ձեռագիրներ, մեծ մասը կիլիկյան շրջաններ։ Ասոնցմեն մեկն է հնագույն երկարացիր ավետարանը, հավանաբար ութերորդ դարեն։

Մեր եկեղեցվոր փառքի օրերեն մնացած վեց հայ վանքերեն երեքը հսրայելի մեջ են։ Յափայի Ս. Նիկողայոսը, ուր գարերի ի վեր կիշևանին հայ ուխտավորները, Ռամէի Ս. Գեղրդ գորավարին մենաստանը, որ 1927-ի երկրաշարժին կիսավեր եղած ու միայն հեկեղեցին անխախտ մնացած է, և Սիոնի բարձունքին վրա Ս. Փրկչի վանքը, որ Կայափա քահանայապետին տանը տեղվույն վրա շինված է, հոն, ուր մեր Փրկչիը բանտարկվեցավ և ուր Ս. Պետրոս երեք անգամ իր Վարդապետը ուրացավ։ Այս վանքը հայ սուրբ տեղայց ամենեն նվիրականներեն մեկն է, որովհետև դարերե ի վեր երուաղեմի պատրիարքներուն դամբարանները կպատճենակի։

1948-ի կրիվներու ժամանակ շափական վնասված է, ճիշտ պատերազմի ճակատին վրա, հին քաղաքի պարիսպես անմիջապես